



Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ Ա Կ Ա Ն Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Վարկի անվանում, նպատակ, արժույթ	<ՈՍԿԻ-ՊԱՐԶ ՊԼՅՈՒՍ> սպառողական, ոսկու գրավով ապահովված, ՀՀ դրամ
Վարկի նվազագույն գումարը	սկսած 100.000 ՀՀ դրամից
Վարկի առավելագույն գումարը	- 6.000.000 ՀՀ դրամ (վարկի գումար/գրավի գրավադրման արժեք հարաբերակցությունը 101-110% կազմելու դեպքում) - 3.500.000 ՀՀ դրամ (վարկի գումար/գրավի գրավադրման արժեք հարաբերակցությունը 111-120% կազմելու դեպքում) - 2.500.000 ՀՀ դրամ (վարկի գումար/գրավի գրավադրման արժեք հարաբերակցությունը 121-130% կազմելու դեպքում) Անկախ վերը նշված սահմանաչափերից, մեկ փոխառուին (իր հետ փոխկապակցված անձանց) սույն վարկատեսակի շրջանակներում տրամադրված վարկերի հանրագումարի ոսկու գրավով չապահովված մասը չի կարող գերազանցել 600.000 ՀՀ դրամը:
Վարկի ժամկետներ	10 - 48 ամիս (կախված վարկի գումարից և վճարման եղանակներից)
Տարեկան անվանական տոկոսադրույքի չափը, տեսակը, հաշվարկման կարգը	17,2-19,2% (կախված վարկի գումարից) Վարկի անվանական տոկոսադրույքը պայմանագրի գործողության ընթացքում մնում է անփոփոխ: Տոկոսագումարը հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ՝ օրական կտրվածքով, փարվա օրացուցային օրերի քանակով:
Տարեկան փաստացի տոկոսադրույք	18,9 – 23,7%

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ! Վարկի տոկոսները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը՝ տոկոսագումարները և վարկի տրամադրման (այդ թվում՝ երրորդ անձանց վճարվող) և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները կատարելու դեպքում: Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի կարգը կարող եք գտնել մեր կայքում, հեղուկալ հղմամբ՝ <http://bless.am/wp-content/uploads/documents/thash.pdf>

Վարկի տրամադրման հետ կապված Ընկերության կողմից սահմանված ծառայության վճարներ	Վարկի գումարի 0,5%-ի չափով, ոչ պակաս 1.000 ՀՀ դրամից և ոչ ավել 4.900 ՀՀ դրամից: Վճարը գանձվում է միանվագ, մինչև վարկի տրամադրման պահը:
Վարկային պարտավորությունները չկատարելու համար կիրառվող պատասխանատվության միջոցները	Վարկի մայր գումարը չվճարելու դեպքում – տարեկան 24% Տոկոսագումարը չվճարելու դեպքում – օրական 0,13%
Վարկի վաղաժամկետ մարում	Վարկի վաղաժամկետ մարումը թույլատրվում է, տույժեր և տուգանքներ չեն սահմանվում: Վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում են վարկառուի վարկավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող Ընկերության եկամուտը ձևավորող վճարները:

Ամփոփագրի հրապարակման ամսաթիվը՝ 17.05.2021թ. Ամփոփագրում նշված պայմանները Ձեր դիմելու օրվա դրությամբ կարող են փոփոխված լինել: Մանրամասների և վարկի ամբողջական պայմանների համար դիմեք Ընկերության վարկային մասնագետին՝ /010/22-52-52 հեռախոսահամարով, info@bless.am էլ. հասցեով կամ Ընկերության փարածքում:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ !

- Ձեր կողմից պարտավորությունները (այդ թվում՝ սահմանված ժամկետներում վարկի գումարը և տոկոսագումարը չմարելու) չկատարելու կամ թերի կատարելու դեպքում Գրավի առարկա գույքը կարող է Օրենքով սահմանված կարգով բռնագանձվել և իրացվել.

- Գրավի առարկայի իրացումից ստացված գումարը վարկի պարտքը չծածկելու դեպքում պարտքի մնացած գումարը կարող է մարվել Ձեր այլ գույքի բռնագանձման և իրացման հաշվին,

- Ձեր կողմից պարտավորությունները չկատարելու կամ թերի կատարելու դեպքում Վարկատուն 3 աշխատանքային օր հետո այդ փվայները ուղարկում է Վարկային բյուրո, որտեղ ձևավորվում է Ձեր վարկային պատմությունը: Դուք իրավունք ունեք տարեկան մեկ անգամ անվճար ստանալ Ձեր վարկային պատմությունը: Վաղ վարկային պատմությունը կարող է խոչընդոտել Ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:

Վարկի ապահովման միջոցներ

Գրավ՝ ոսկյա իրեր, ձուլակտորներ, որոնք ընդունվում և գնահատվում են որպես ոսկու ջարդոն

Վարկի գումար/գրավի գրավադրման արժեք առավելագույն հարաբերակցություն

110% - ՄԻԱՅՆ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐ (յուրաքանչյուր ամիս միայն տոկոսագումարներ, վարկը՝ ժամկետի վերջում վճարում) եղանակի դեպքում
130% - ԱՆՈՒԻՏԵՏԱՅԻՆ (վարկի և տոկոսագումարի ամենամսյա հավասարաչափ գումարով վճարում) եղանակի դեպքում

Վարկի ստացման, այդ թվում՝ գրավադրման հետ կապված ծախսեր, որոնք ենթակա են վճարման երրորդ անձանց

Բացակայում են

Վարկի և տոկոսագումարների վճարման եղանակ

- ՄԻԱՅՆ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐ (յուրաքանչյուր ամիս միայն տոկոսագումարներ, վարկը՝ ժամկետի վերջում վճարում) կամ
- ԱՆՈՒԻՏԵՏԱՅԻՆ (վարկի և տոկոսագումարի ամենամսյա հավասարաչափ գումարով վճարում)

Վարկի տրամադրման եղանակներ

Կանխիկ
- միանվագ վարկ՝ ԱՆՈՒԻՏԵՏԱՅԻՆ վճարման եղանակով, կամ
- վերականգնվող վարկային գիծ փոփոխական սահմանաչափով՝ ՄԻԱՅՆ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐ վճարման եղանակով

Պարտքի գանձման հերթականությունը

Տույժեր, տոկոսագումարներ, վարկի մայր գումար

Մտածելու ժամանակ

Վարկառուն իրավունք առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու վարկային պայմանագիրը՝ դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ վճարելով վարկի օգտագործման համար տոկոսներ, հաշվարկված վարկային պայմանագրում նշված տարեկան փաստացի տոկոսադրույքով:

Քաղվածքների (կրկնօրինակների) տրամադրման կարգն ու ժամկետները

Վարկի քաղվածքները (կրկնօրինակները) տրամադրվում են անվճար, ամսական պարբերականությամբ, հաճախողի նախընտրած եղանակով

Հաճախորդի հետ հաղորդակցման կարգը

Հաճախորդի ընտրությամբ՝ փոստով, էլ.փոստով, Ընկերության գրասենյակում: *Էլեկտրոնային եղանակով հաղորդակցումը ամենահարմարավեպն է: Այն հասանելի է Ձեզ 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկից և ապահովում է գաղտնիություն*

Վարկի ձևակերպման վայրը

Ընկերության գլխամասային գրասենյակ, մասնաճյուղեր

Որոշում ընդունելու և վարկը տրամադրելու ժամկետներ

Վարկային հայտը /ներառյալ պահանջվող փաստաթղթերը/ ներկայացնելու օրվա ընթացքում

Վարկի տրամադրման դրական գործոնները

- ներկայացված հայտը համապատասխանում է սահմանված պայմաններին ու պահանջներին
- Ընկերության համար ընդունելի է հաճախորդի վարկային ծանրաբեռնվածությունը

Վարկի մերժման գործոնները

- ներկայացված հայտը չի համապատասխանում սահմանված պահանջներին
- հաճախորդը, Ընկերության կարծիքով, խիստ ծանրաբեռնված է վարկային և այլ անձանց նկատմամբ պարտավորություններով
- վարկի իրական շահառուն այլ անձ է

Պահանջվող փաստաթղթերը, ներկայացման ներկայացման ժամկետները նվազագույն դրանց կարգն ու ժամկետները

-Հաճախորդի անձնագիր /նույնականացման քարտ/ և ՀՇՀ (սոց. քարտ), Փաստաթղթերը ներկայացվում են վարկային հայտի հետ միաժամանակ: Ընկերությունը կարող է իր ներքին իրավական ակտերով և/կամ <<Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով հաճախորդից պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ բանավոր տեղեկություններ:

Գրավը վերադարձնելու ժամկետ

Վարկի ամբողջական մարումից հետո հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում

Ընկերությունը նախքան վարկային պայմանագրի կնքումը հաճախորդին տրամադրում է Անհատական թերթիկ՝ համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի «Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները» Կանոնակարգ 8/05-ի»:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ! ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՁ ԿՏՐԱՄԱԴՐԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵՁ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«ԲԼԵՍՍ» ՈՒՎԿ ՍՊԸ-ն վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից